ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԳՈՒՅԱԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 2011-2020 ԹԹ.

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2010 թ. վերջից արաբական երկրներում սկսված զանգվածային շարժումներն ու ցույցերը վերափոխումների ու իշխանափոխությունների պատճառ դարձան: Սիրիան նույնպես անմասն չմնաց այդ գործընթացներից: Սիրիական հակամարտության խնդիրը ունի ոչ միայն տարածաշրջանային չափումներ, այլև գլոբալ դրսևորումներ, որտեղ իրենց շահերն ու հետաքրքրություններն են հետապնդում թե՛ տարածաշրջանային, թե՛ արտատարածաշրջանային ուժեր, որոնք կազմակերպում են տարբեր ձևաչափերով քննարկումներ: Հոդվածում փորձ է արվում ուսումնասիրել սիրիական հակամարտության ընթացքը, զարգացման դինամիկան, ներկա վիճակը և հանգուցալուծման ուղիները:

2011 թ. մարտից Սիրիայում սկսվեցին բողոքի ակցիաներ և ցույցեր, որոնք հետագայում երկրի ողջ տարածքում վերածվեցին զինված բախումների և ռազմական լայնածավալ գործողությունների իշխանությունների և ընդդիմության միջև: Սկզբնավորման պահին սիրիական հակամարտությունն առավելապես սոցիալական բնույթի էր, բայց հետագայում աստիճանաբար ընդունեց քաղաքական սուր ուղղվածություն՝ երկիրը կանգնեցնելով խոր ճգնաժամի առջև: Աստիճանաբար ակնառու դարձան Սիրիայում ներգրավված հակամարտող կողմերը՝ Բաշար ալ-Ասադի իշխանությունն ու հիմնականում դրսից (-Պարսից ծոցի արաբական միապետություններ, Թուրքիա, Հորդանան և այլն) կազմակերպվող ու ֆինանսավորվող ընդդիմադիր զանգվածը, որը սկզբնական շրջանում ներկայացված էր առավելապես «չափավոր» ուժերով, հետագայում դրանք իրենց դիրքերը զիջեցին կազմակերպչական, համախմբվածության և ռազմական փորձի առումով իրենց գերազանցող իսլամական ծայրահեղական ուժերին[1]:

2011 թ. վերջին սիրիական իշխանությունները որդեգրեցին Սիրիայի արևմտյան ռազմավարական կարևորության տարածքներն ու մարզկենտրոնները պաշտպանելու և այս հատվածներում ռազմական լայնածավալ գործողություններից խուսափելու մարտավարությունը: Այդ նպատակով սիրիական իշխանությունները ստիպված էին երկրի

[1] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** Իսլամական պետություն. ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 100-105:

առանձին հատվածներից, մասնավորապես հյուսիսային, արևելյան և հարավային որոշ շրջաններից դուրս բերել զինուժը և տեղակայել Հալեպ-Համմա-Հոմս-Դամասկոս գծի ողջ երկայնքով[2]: Դա հնարավորություն տվեց որոշ ժամանակ հեռու պահելու Սիրիայի ռազմավարական արևմտյան մարզկենտրոնները ռազմական թեժ գործողություններից ու ավերածություններից:

Սիրիական հակամարտության ընթացքում նոր իրողություններ ևս նկատվեցին: Հյուսիսային որոշ շրջաններում քրդերը, սիրիական իշխանություններից ստանալով արտոնություններ, ստեղծեցին ինքնակառավարման մարմիններ և սեփական ինքնապաշտպանական ռազմական խմբեր: Դրա հետ մեկտեղ՝ Սիրիայի հյուսիսային Աֆրին, Քոբանի և ալ-Ջազիրա քրդաբնակ շրջաններում տեղի ազդեցիկ կառույցներից «Քրդական դեմոկրատական միությունը» հանդես եկավ ինքնավարություն հիմնելու հայտարարություններով, ինչը քննադատության արժանացավ ինչպես տարածաշրջանում (Սիրիա, Թուրքիա և այլն), այնպես էլ հենց քրդերի շրջանում[3]:

Մյուս իրողությունը իսլամական ծայրահեղ արմատականության աննախադեպ ակտիվությունն էր Սիրիայում: Դրա անմիջական արտահայտությունը եղավ 2014 թ. ամռանը «Իսլամական պետության» հռչակումը Սիրիայի զգալի տարածքների վրա: Աշխարհի տարբեր հատվածներից նկատվեց իսլամականների ներհոսք: Դեպի Սիրիա շարժվող նրանց շարքերում մեծ էր նաև Կովկասի իսլամականների թիվը: Իսլամական ծայրահեղականների ակտիվությունը իսլամական ծայրահեղական երկու հիմնական ճամբարների՝ «ալ-Կաիդա»-ի և «Իսլամական պետության» միջև հակասությունների սրման և բախումների պատճառ դարձավ[4]:

2014 թ. սիրիական զարգացումներին առնչվող մեծ տերությունների վարքագծում փոփոխություն նկատվեց, ինչը հիմնականում պայմանավորված էր երկրի զգալի հատվածում անկանխատեսելի, անվերահսկելի և վտանգավոր իրավիճակով: Դա արտահայտվեց սիրիական հակամարտության մեջ ԱՄՆ-ի և Ռուսաստանի անմիջական ներքաշմամբ: ԱՄՆ-ի և նրա դաշնակից երկրների ռազմաօդային ուժերը 2014 թ. սկսեցին պարբերաբար ավիահարվածներ հասցնել ընդդիմադիր իսլամական ծայրահեղական խմբավորումներին[5]: Ցամաքում

---

[2] Տե՛ս **Վ. Պետրոսյան,** Դեմոկրատական միություն կուսակցության վերելքի պատճառները սիրիական զարգացումների համատեքստում, «Ժամանակակից Եվրասիա», 2015, № 4 (2), էջ 14-15:

[3] Տե՛ս **Said R.,** Syria's Kurds rebuked for seeking autonomous region, March 17, 2016, https://www.reuters.com/article/us-mideast-crisis-syria-federalism/syrias-kurds-rebuked-for-seeking-autonomous-region-idUSKCN0WJ1EP

[4] Տե՛ս **Ս. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 111-115:

[5] Տե՛ս «U.S. Bombs ISIS Sites in Syria and Targets Khorasan Group», September 24, 2014, https://www.nbcnews.com/storyline/isis-terror/u-s-bombs-isis-sites-syria-targets-khorasan-group-n209421

ԱՄՆ-ն սկսեց փնտրել դաշնակիցներ, և ընտրությունը կանգնեց Սիրիայի քրդերի վրա:

Սիրիայում իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ 2015 թ. սեպտեմբերին այդ երկրի կառավարությունը ընդդիմադիր խմբավորումների դեմ պայքարելու համար ռազմական օգնություն խնդրեց Ռուսաստանից: Ռուսական զինուժի ռազմական միջամտությունը սկսվեց այդ ամսվա վերջից օդային ինտենսիվ հարվածներով: Հետագայում ռուսներն ավելացրին ռազմական ներկայությունը Սիրիայում՝ սպառազինություն և զինուժ տեղակայելով Տարտուս և Հմեյմիմ ռազմաբազաներում՝ ակտիվորեն ներքաշվելով օդային և ցամաքային ռազմական գործողությունների մեջ[6]:

Ռուսական օգնությունը փոխեց իրավիճակը Սիրիայում հօգուտ սիրիական իշխանությունների: Այդ համատեքստում սիրիական հակամարտությունը կարելի է բաժանել երկու մեծ փուլերի՝ մինչև ռուսական զինուժի անմիջական ներգրավումը և դրանից հետո:

Ռուսական զինուժի և շիայական խմբավորումների աջակցությամբ սիրիական կանոնավոր բանակը 2016 թ. սկսած արձանագրեց ռազմական հաջողություններ. ազատագրվեցին մի շարք տարածքներ և բնակավայրեր, այդ թվում՝ Սիրիայի համար կարևոր նշանակություն ունեցող Հալեպ քաղաքը: 2016-2020 թթ. տարածաշրջանային երկրներից Թուրքիան ներխուժեց Սիրիա՝ նախաձեռնելով լայնածավալ ռազմական գործողություններ երկրի հյուսիսում[7]:

Սիրիայում գործընթացները բացասաբար ազդեցին երկրի էթնիկ-դավանական փոքրամասնությունների, ի մասնավորի՝ սիրիահայերի վրա, որոնք, հիմնականում բնակվելով երկրի հյուսիսային շրջաններում, հակամարտության սկզբից հայտնվեցին ռազմական ակտիվ բախումների թատերաբեմում: Աճող վտանգի պայմաններում սիրիահայ համայնքը հակամարտությունում չեզոքություն պահպանելու հայտա-

---

[6] Տե՛ս «Russia carries out first air strikes in Syria», September 30, 2015, https://www.aljazeera.com/news/2015/09/russian-carries-air-strikes-syria-150930133155190.html

[7] Դրանցից են՝ 2016 թ. օգոստոսին «Եփրատի վահան» ռազմական գործողությունը, որը առարկայական դարձրեց թուրքական ներկայությունը Սիրիայի հյուսիսային որոշ հատվածներում, 2017 թ. վերջին Իդլիբի ռազմական գործողությունները, որոնց հետևանքով նահանգում ստեղծվեցին թուրքական ռազմական դիտակետեր, 2018 թ. սկզբին քրդաբնակ Աֆրինի դեմ «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը, որի հետևանքով Աֆրինն անցավ թուրքական վերահսկողության տակ: Այդ ռազմագործողության նպատակը ոչ միայն այս հատվածից քրդական ուժերին դուրս հանելն էր, այլև այստեղ թուրքամետ տրամադրությունների ծավալումն ու իր սահմանին կանխատեսելի բնակչություն ունենալը, 2019 թ. հոկտեմբերին «Խաղաղության ակունք» ռազմական գործողությունը Ռաս ալ-Այն և Թալ Աբյադ բնակավայրերի ուղղությամբ, որի հետևանքով Սիրիայի հյուսիսային այդ հատվածում մոտ 100 կմ երկարությամբ և 30 կմ խորությամբ վերահսկողության գոտի ստեղծվեց թուրքական զինուժի կողմից, 2020 թ. հունվար-փետրվարին Իդլիբում ստեղծված լարված իրավիճակը ստիպեց Թուրքիային ավելացնել ռազմական ներուժը նահանգում:

բարություններով հանդես եկավ, որը ոչ միայն ի ցույց դրեց հայ համայնքի կշռադատված պահվածքը սիրիական հակամարտությունում, այլև ստիպեց մտածել սեփական համայնքի ամբողջականությանը և միասնականությանը միտված անհրաժեշտ քայլերի ու միջոցառումների իրականացման ուղղությամբ[8]: 2016 թ. վերջին հայաբնակ Հալեպ քաղաքի ազատագրումը որոշ չափով թեթևացրեց սիրիահայերի վիճակը: Այնուամենայնիվ, 2019 թ. վերջին և 2020 թ. սկզբին Սիրիայի հյուսիսային տարածքների ողջ երկայնքով, մասնավորապես՝ Լաթակիա, Իդլիբ, Հալեպ, ալ-Ռակկա, ալ-Հասաքա նահանգներում ծավալված ռազմական գործողությունները դեռևս վտանգ էին ներկայացնում սիրիահայերի, քրդերի և մյուս էթնիկ-դավանական փոքրամասնությունների համար:

2019 թ. վերջին և 2020 թ. սկզբին սիրիական պատերազմի թեժ կետերը դարձան Իդլիբ և Հալեպ նահանգները, որտեղ տեղի ունեցան ռազմական բախումներ սիրիական բանակի և ընդդիմադիրների միջև: Երկկողմանի բազմաթիվ զոհերից զատ՝ սպանվեցին նաև թուրք և ռուս զինվորականներ: Սիրիական բանակի առաջխաղացումը բարելավեց իշխանությունների դիրքերը այդ կարևոր նահանգներում և ավելացրեց հակամարտության կարգավորմանը միտված ջանքերի արդյունավետությունը:

Սիրիական հակամարտությունը ազդել է մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային զարգացումների վրա՝ ճանապարհ հարթելով նոր իրողությունների, մի շարք ուժային կենտրոնների՝ Մերձավոր Արևելքի գործընթացներում ակտիվ ներգրավվածության և սիրիական հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված տարբեր ձևաչափերով բանակցությունների համար: Նկատել է նաև արտասիրիական ուժային այլ կենտրոնների (տարածաշրջանային և արտատարածաշրջանային), ինչպես նաև այլ դերակատարների միջնորդավորված և անմիջական ներգրավվածություն, որոնք այս կամ այն չափով ազդել են սիրիական հակամարտության վրա: Բաշար ալ-Ասադի դեմ հանդես եկող արտաքին ուժերը բազմազան էին՝ սկսած արևմտյան գերտերություններից մինչև տարածաշրջանային ուժային կենտրոններ, որոնք սկսեցին անմիջականորեն մասնակցել ոչ միայն սիրիական ընդդիմադիր ճամբարի ստեղծմանը՝ ավելացնելով ընդդիմությանը տրվող օժանդակությունը, այլ նաև ակտիվորեն ներգրավվել Սիրիայի խնդրի հանգուցալուծմանը միտված միջազգային գործընթացներին[9]:

---

[8] Տե՛ս «Սիրիահայ եկեղեցականները հայտարարել են, որ պատերազմում չեզոք դիրք են գրավում՝ ո՛չ իշխանությանը, ո՛չ ընդդիմադիրներին չեն սատարելու», «Առավոտ», սեպտեմբերի 18, 2012 թ. http://www.aravot.am/2012/09/18/110608/

[9] Տե՛ս **Aksenyonok A.,** Intra-Syrian Reconciliation: Between Astana and Geneva, Valdai, November 14, 2017, http://valdaiclub.com/a/highlights/syrian-reconciliation-between-astana-and-geneva/

Սիրիական հակամարտության հանգուցալուծմանն ուղղված տարբեր ձևաչափերով հանդիպումներից կարևորվում են Ժնևի և Աստանայի գործընթացները:

Ժնևում քննարկվող օրակարգային հիմնական հարցերից էին՝ Բաշար ալ-Ասադի հեռացումը, անցումային կառավարության ստեղծումը, սահմանադրական բարեփոխումները, խորհրդարանական արտահերթ և ազատ ընտրությունները և այլն. սակայն դրանց լուծումներ չէին գտնում, հետևաբար չէին ազդում բանակցությունների հաջող ընթացքի վրա:

Աստանայում քննարկվող հարցերի շրջանակն ընդգրկում էր Սիրիայի առանձին հատվածներում կրակի դադարեցումը, «ապառազմականացված գոտիների ստեղծումը», հումանիտար օգնությունը և այլն, որոնք հնարավոր եղավ իրականացնել նաև շնորհիվ այն բանի, որ Սիրիայի առանձին հատվածներ գտնվում էին հիշյալ երկրների՝ ՌԴ-ի, Թուրքիայի և Իրանի ազդեցության տակ: Ի տարբերություն Աստանայի՝ ժնևյան բանակցություններն արդյունավետ չէին նաև այդ հնարավորությունների բացակայության պատճառով:

Ժնևյան ձևաչափը կենտրոնացած էր հիմնական երեք խնդիրների կարգավորման վրա՝ ահաբեկչության դեմ պայքար, փախստականներ իրողություն և անցումային կառավարություն: Բանակցություններում որոշակի արդյունքներ գրանցելով առաջին երկու խնդիրների առումով՝ անցումային կառավարության և սիրիական իշխանական համակարգին վերաբերող հարցերում առաջընթաց չնկատվեց, որը ևս բացասաբար ազդեց հակամարտության կարգավորման ժնևյան գործընթացի արդյունավետության վրա[10]:

Պետք է փաստել նաև, որ Աստանայի գործընթացում նախաձեռնող կողմերի միջև առկա էին խնդիրներ և տարբերվող մոտեցումներ հակամարտության կարգավորման առումով: Այդ համատեքստում դժվար էր երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանին, Իրանին և Թուրքիային գոհացնող լուծումներ գտնել, քանի որ այդ երկրների շահերը խաչվում էին: Սակայն, ի տարբերություն Ժնևի, որն ընդգրկում էր բանակցող կողմերի առավել լայն շրջանակ, Աստանայի բանակցային ձևաչափում մասնակցող կողմերի թիվը փոքր էր, իսկ քննարկվող հարցերի շրջանակը՝ ավելի նեղ: Աստանայի շարունակությունը համարվող Սոչիի, Անկարայի և Թեհրանի եռակողմ (Ռուսաստան, Թուրքիա, Իրան) հանդիպումները միտված էին Սիրիայում տեղի ունեցող քաղաքական գործընթացի փուլը (Աստանայի ձևաչափ) առանձնացնելու քաղաքական անցումային (Ժնևի ձևաչափ) փուլից՝ դուրս մղելով սիրիական խնդրի կարգավորման ժնևյան գործընթացը:

Ժնևի բանակցային փուլերը փոխլրացնող գործընթացներ էին, կա-

[10] Տե՛ս **Radwan Z.,** Syria Peace Talks in Geneva: A Road to Nowhere, March 27, 2017, Arab Center, Washington DC, էջ 4-5:

յուն կազմով ու հնչող տեսակետներով, որտեղ նոր մոտեցումներին առանձնապես տեղ չէր հատկացվում: Ըստ այդմ՝ Աստանայի ձևաչափի առանձնահատկություններից մեկը, ի տարբերություն Ժնևի բանակցությունների, այն էր, որ դա բոլորովին այլ գործընթաց էր և նոր ձևաչափ Սիրիայի հակամարտության կարգավորման համար:

Միջազգային տարբեր ձևաչափերով սիրիական խնդրի կարգավորման գործընթացներում հիմնականում նկատվեցին հատվածային լուծումներ, որոնք պայմանավորված էին սիրիական հակամարտության առանձնահատկությամբ ու գլոբալ բնույթով:

Ամփոփում: Սիրիական հակամարտության սկզբնական տարիներին, ընթացող ռազմական թեժ բախումներին զուգահեռ, միջազգային հարթակներում ճգնաժամի հանգուցալուծման բազմաթիվ ծրագրեր և համաձայնություններ մշակվեցին՝ նպատակ ունենալով հասնել Սիրիայում ստեղծված իրավիճակի կայունության, հակամարտող կողմերին նստեցնել բանակցային սեղանի շուրջ և որոշակի քայլերի հերթականությամբ (կրակի դադարեցում, անցումային կառավարություն, ընտրություններ և այլն) լուծումներ գտնել: Հակամարտության սկզբնական փուլում (2011-2014 թթ.) բանակցային գործընթացները չարդարացրեցին իրենց, քանի որ վերոհիշյալ ժամանակահատվածում հիմնական խնդիրները լուծվում էին մարտի դաշտում: Այդ ընթացքում կազմակերպվում էին բանակցային տարաբնույթ նախաձեռնություններ ու գործընթացներ, որոնք արդյունավետ չէին:

Միջազգային տարբեր ձևաչափերով սիրիական ճգնաժամի կարգավորման բանակցային գործընթացներում որոշակի արդյունքներ գրանցվեցին 2015-2020 թթ., և այստեղ կարևոր դեր խաղացին Ժնևի և Աստանայի գործընթացները: Հակամարտության առանձնահատկությունն ու գլոբալ բնույթը Սիրիայի ճգնաժամի հատվածային լուծումների հնարավորություն տվեցին, ինչը չափազանց մեծ ազդեցություն ունեցավ հակամարտող կողմերի տեսակետները լսելի դարձնելու առումով: Սիրիական հակամարտության կարգավորման հիշյալ գործընթացները թույլ են տալիս ենթադրել, որ հակամարտության մեջ ներգրավված կողմերն անցում են կատարել Սիրիայի ճգնաժամի հատվածային կարգավորման տարբերակին: Այն ենթադրում է ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական կարևորություն ունեցող առանձին շրջաններին առնչվող խնդիրների կարճաժամկետ լուծում կամ սառեցում, զարգացումների կանխատեսելիության ապահովում, որից հետո հնարավոր կլինի սիրիական խնդրի վերաբերյալ համապարփակ համաձայնագիր ստորագրել:

Բանալի բառեր – *Սիրիա, Բաշար ալ-Ասադ, ընդդիմություն, հակամարտության հանգուցալուծման գործընթացներ*

САРКИС ГРИГОРЯН – *Процессы разрешения сирийского конфликта в 2011–2020 гг.* – С марта 2011 г. в Сирии начались акции протеста, которые переросли в вооружённые столкновения и крупномасштабные военные действия по всей стране между правительственными войсками и оппозицией. Ситуация резко изменилась к концу 2015 г., когда Россия оказала непосредственную военную помощь правительству.

Переговорный процесс, сопровождавший кризис, протекал в разных форматах и лишь частично сглаживал возникшие проблемы. Масштабный характер конфликта не позволял большего, чем фрагментарноые решения. Но и они создали возможность, чтобы мнения сторон были услышаны. Кровопролитный конфликт в Сирии давно перестал быть внутренним делом этой страны. Его урегулирование непременно должно также иметь и внерегиональное измерение, основанное на разумных подходах.

Ключевые слова: *Сирия, Башар аль-Асад, оппозиция, процессы разрешения конфликта*

SARGIS GRIGORYAN – *The Syrian Conflict Resolution Processes in 2011-2020.* – In March 2011, rallies and demonstrations started in Syria, which later developed into an armed conflict and large-scale military operations between the Syrian government and opposition all over the country. With the gradual escalation of the conflict at the end of 2011, the Syrian government adopted a strategy of defending the western territories and regional centers, which were of strategic importance in Syria, and avoiding large-scale military operations in these areas. The situation in Syria changed dramatically at the end of 2015. It was due to Russia's direct military assistance to the Syrian government.

The Syrian conflict has affected regional and extra-regional developments in the Middle East, paving the way for new realities, for the active engagement of a number of power centers in the Middle East and the processes of various formats aimed at a peaceful resolution of the conflict.

During the conflict (2011-2020) there were some results in the negotiation process (regulated by various international formats) of the crisis. Though they had mainly solved problems partially in certain parts of Syria, the importance of meetings in such formats cannot be underestimated. The peculiarity and global nature of the conflict provided no other solution than partial solutions to the Syrian crisis, which had an enormous impact and created opportunities for the views of the conflicting parties to be heard. The aforementioned resolution processes of the conflict allow us to assume that the parties involved in the conflict have shifted to a partial solution to the Syrian crisis. It presupposes a short-term solution or freezing of issues related to some areas of military-political and socio-economic importance, ensuring predictability of developments, after which it will be possible to get a comprehensive agreement on the Syrian conflict.

The Syrian conflict has long ceased to be a Middle Eastern regional reality, affecting global processes. Conflict resolution must have both regional and extra-regional dimensions, based on sensible and sincere approaches, which should prompt parties concerned with a quick resolution to the conflict to find the key to resolving the Syrian issue.

Key words: *Syria, Bashar al-Assad, opposition, conflict resolution processes*

Ներկայացվել է՝ 27.02.2020, Գրախոսվել է՝ 22.05.2020, Ընդունվել է տպագրության՝ 24.07.2020